

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

## Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 73,364,346.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 84,941,605.9 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 86.4%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 82,703,901.2 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 73,297,611.5 հազար դրամ՝ ապահովելով 88.6% կատարողական:

Երևան քաղաքի 2020 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 27,020,249.6 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 24,528,951.8 հազար դրամ կամ 90.8%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը պակաս է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից 473,963.7 հազար դրամով:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 64,300,825.6 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 63.5%-ը: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, պատվիրակված լիազորությունների մասամբ չկատարմամբ, ինչպես նաև COVID-19 համավարակի հետ արտակարգ և ռազմական դրության հետ պայմանավորված որոշ ծրագրերի չկատարմամբ:

Հարկ է նշել, որ 2020 թվականի բյուջեի ծրագրված (ճշտված) 16,366,857.1 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 9,063,520.6 հազար դրամ հավելուրդով:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

### **Եկամուտներ**

Երևանի 2020 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 23.1%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 6.6%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 11.8%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.2%-ը՝ տեղական տուրքերից, 0.5%-ը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 30.8%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհների հաշվին, 46.1%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.3%-ը՝ շահաբաժիններից, 1.3%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 35.7%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 7.3%-ը՝ վարչական գանձումներից, 0.7%-ը՝ տույժերից, տուգանքներից, 0.7%-ը՝ այլ եկամուտներից :

### **Հարկեր և տուրքեր.**

Հարկային եկամուտների հավաքագրումը 2020 թվականին թերակատարվել է, մասնավորապես փոխադրամիջոցների համար գույքահարկը հավաքագրվել է ծրագրվածից 312,884.0 հազ. դրամով պակաս, որը իր հերթին կազմում է հարկային եկամուտներից ստացած եկամտի 51.1 %-ը:

Տեղական տուրքերի կազմում 47.2% տեսակարար կշիռ է ապահովել արտաքին գույքի տեղադրելու թույլտվության համար 1,459,807.4 հազար դրամի չափով փաստացի հավաքագրված տուրքը, որը գերակատարվել է 58,307.4 հազ. դրամով: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 516,459.4 հազար դրամ ծրագրված 566,800.0 հազար դրամի դիմաց:

Հարկ է նշել, որ թեև տեղական տուրքերի որոշ տեսակների մասով առկա են ծրագրված ցուցանիշների գերակատարումներ, սակայն ընդհանուր առմամբ տեղական տուրքերի մասով եկամտի հավաքագրումը ևս թերակատարվել է՝ փաստացի կազմելով

3,090,476.3 հազ. դրամ ծրագրված (հաստատված) 3,158,395.0 հազ. դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 97.8%:

Այսպիսով հարկային եկամուտների և տուրքերի մասով 2020 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 16,934,166.4 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 18,429,393.2 հազար դրամի նկատմամբ:

Այդ թվում՝

-գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 12,908,601.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 14,099,915.7 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 91.6%, որը 2019 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 359,487.9.0 հազար դրամով,

-հողի հարկի մասով մուտքերը կազմել են 561,456.8 հազար դրամ, նախատեսված 714,082.5 հազար դրամի դիմաց,

-տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 3,090,476.3 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,158,395.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 97.8%,

-պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 373,632.5 հազար դրամ՝ ծրագրված 457,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 81.8%, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 71,122.9 հազար դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 302,509.6 հազար դրամ:

### **Պաշտոնական դրամաշնորհներ.**

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 22,624,106.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 25,063,248.7 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 90.3%, որից << պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 13,430,355.1 հազար դրամ, այլ դոտացիաներ 660,000.5 հազար դրամ, համայնքի բյուջե

մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով 210,722.7, իսկ ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը՝ 8,263,014.0 հազար դրամ և ՀՀ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 60,014.0 հազար դրամ:

### **Այլ եկամուտներ.**

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 41,448,964.0 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 33,806,073.5 հազար դրամ, որից.

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 203,461.9 հազար դրամ՝ կանխատեսված 121,366.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 167.6%,

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 926,632.4 հազար դրամ, ծրագրված 1,123,025.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 82.5%,

-պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքային լուսավորության, կոշտ թափոնների կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 26,211,288.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 32,858,107.6 հազար դրամի դիմաց կամ 79.8%-ը,

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 22,100.1 հազար դրամ,

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 4,686,088.2 հազար դրամ, նախատեսված (հաստատված) 5,817,352.3 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 80.6%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է աղբահանության վճարների, ինչպես նաև ավտոկայանատեղի վճարների գծով կանխատեսված (ըստ մակերեսի) և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

-ինքնական կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 678,857.1 հազար դրամ, որն ավել է 648,857.1 հազար դրամով ծրագրված 30,000.0 հազար դրամից,

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 504,476.8 հազար դրամ, նախատեսված 492,593.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 102.4%-ը, ինչը պայմանավորված է առաջին և վերաքննիչ դատարաններում քննվող գործերի ժամանակատարությամբ,

-համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերը նախատեսված 18,000.0 հազար դրամի դիմաց կազմել են 2,369.7 հազ. դրամ,

-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 4,220.7 հազար դրամ,

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 532,087.4 հազար դրամ՝ նախատեսված 961,520.0 հազար դրամի դիմաց:

## **Ծախսեր**

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 64,300,825.6 հազար դրամի ծախսեր՝ ծրագրված (ճշտված) 101,308,463.0 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 63.5%-ը: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 87,6%: Ընդամենը փաստացի ծախսերից 66,461,441.8 հազար դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 9,142,951.8 հազար

դրամը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 11,303,568.0 հազար դրամ:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 50.1%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 18.8%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 15.0 %:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	10,071,648.60	8,717,956.00	86.6%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	12,911,724.90	9,649,905.30	74.7%
Սուբսիդիաներ	43,780,650.90	40,108,710.60	91.6%
Դրամաշնորհներ	596,431.00	564,515.90	94.6%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	779,455.10	721,932.00	92.6%
Այլ ծախսեր	14,348,575.70	6,723,563.50	46.9%
Հիմնական միջոցներ	22,714,926.80	9,116,110.30	40.1%
Պաշարներ	26,050.00	1,700.00	6.5%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-521,000.00	-281,134.20	54.0%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-3,400,000.00	-11,022,433.80	324.2%
Ընդամենը	101,308,463.00	64,300,825.60	63.5%

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	9,940,172.80	7,798,954.50	78.5%
Պաշտպանություն	89,810.00	36,938.10	41.1%
Տնտեսական հարաբերություններ	25,501,981.20	2,533,829.20	9.9%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	12,012,646.60	9,642,557.00	80.3%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	6,488,349.80	4,894,701.00	75.4%
Առողջապահություն	511,156.00	300,070.50	58.7%
Հանգիստ, մշակույթ և կրոն	4,301,542.10	3,130,298.30	72.8%
Կրթություն	34,460,335.30	30,577,808.80	88.7%
Սոցիալական պաշտպանություն	2,392,223.40	1,344,439.40	56.2%
Պահուստային ֆոնդեր	5,610,245.80	4,041,228.80	72.0%
Ընդամենը	101,308,463.00	64,300,825.60	63.5%

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ծախսերի կատարողականի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների և տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի վերլուծությամբ (բացառությամբ պատվիրակված լիազորությունների) նախատեսված ցուցանիշներից փաստացի կատարողականների շեղումը պայմանավորված է ծրագրերի գծով առկա տնտեսումներով և COVID-19 համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված որոշ չկատարած աշխատանքներով:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

Խ/Խ	Վարչական շրջանի անվանումը	2020թվականի բյուջեով նախատեսվածը	2020թվականին փաստացի ծախսը	Կատարման %-ը 2020 թ. նախատեսվածի նկատմամբ
<b>1</b>	<b>Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)</b>	<b>75,899,106.30</b>	<b>44,209,325.10</b>	<b>58.2%</b>
2	Աջափնյակ	2,845,862.20	2,324,795.10	81.7%
3	Ավան	1,320,587.50	1,055,352.90	79.9%
4	Արաբկիր	2,641,300.70	1,945,107.60	73.6%
5	Դավթաշեն	1,379,875.90	1,076,654.40	78.0%
6	Էրեբունի	2,191,418.60	1,691,911.90	77.2%
7	Կենտրոն	2,823,732.60	2,190,235.40	77.6%
8	Մալաթիա-Մեքաստիա	2,914,318.80	2,344,827.60	80.5%
9	Նոր Նորք	3,160,243.50	2,515,441.40	79.6%
10	Նորք-Մարաշ	555,990.30	439,591.10	79.1%
11	Նուբարաշեն	559,578.60	452,601.90	80.9%
12	Շենգավիթ	2,943,268.30	2,403,346.00	81.7%
13	Քանաքեռ-Զեյթուն	2,073,179.70	1,651,635.20	79.7%
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>101,308,463.00</b>	<b>64,300,825.60</b>	<b>63.5%</b>

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. **Կառավարման մարմնի պահպանում** ծրագրով 2020 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 9,187,750.4 հազար դրամ, որից փաստացի կատարվել է



7,427,606.0 հազար դրամ կամ նախատեսվածի 80.8%-ը, որը պակաս է 2019 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 684,490.8 հազար դրամով: Ծրագրի գծով 2020 թվականի խնայողությունը կազմել է 1,760,144,4 հազար դրամ, որից միայն աշխատավարձի և պարգևատրման գծով ծախսերի տնտեսումը կազմել է 1,225,548.5 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով ծախսերը կազմում են՝ 5,245,220.4 հազար դրամ՝ նախատեսված 5,564,619.4 հազար դրամի դիմաց կամ 94.3%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N 104-Ա և 2020 թվականի հունիսի 24-ի N 258-Ա որոշումներով սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 2133.5 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 2034 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 761,857.5 հազար դրամ՝ նախատեսված 1,668,007.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 45.7%, որը ավել է 2019 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 918,672.9 հազար դրամով:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 190,261.3 հազար դրամ՝ նախատեսված 263,211.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 72.3%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 14,578.2 հազար դրամ նախատեսված 18,986.3 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 149,778.7 հազար դրամ՝ նախատեսված 185,427.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 80.8%, որը պակաս է 2019 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 20,864.0 հազար դրամով, և ներառում են փոստային, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների համար տրամադրված գումարները:

Ապահովագրական ծախսերը կազմել են 19,028.0 հազար դրամ՝ նախատեսված 21,322.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 89.2%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական գործընթացն իրականացնելուն:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 37,445.4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87.9%, որը պակաս է 2019 թվականի փաստացի ցուցանիշից 12,658.3 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում տարեսկզբից ապահովվել է քաղաքապետարանի թվով 10 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը և այլն:

Ներքին գործուղումների գծով ծախսը կազմել է 506.6 հազար դրամ՝ ճշտված 1,300.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 39.0 %:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 645.2 հազար դրամ՝ նախատեսված 19,430.7 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 3.3 %, կամ խնայողությունը կազմել է 18,785.5 հազար դրամ, որը պայմանավորված է ամբողջ աշխարհում COVID-19 համաճարակով: Գործուղումները կազմակերպվել են դեպի Թբիլիսի, Ստեփանակերտ և բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման համար ծախսերը կազմել են 6,147.9 հազար դրամ՝ նախատեսված 14,480.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 42.6%, որն ավելի է 2019 թվականի փաստացի ցուցանիշից 2,537.0 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 44,184.0 հազար դրամ՝ նախատեսված 48,780.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 90.6%-ով, ինչը ներառում է քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, ինչպես նաև վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 6,549.0 հազար դրամ՝ նախատեսված 19,578.7 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 33.4%-ով, ինչը 361.0 հազար դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Նշված գումարի շրջանակներում իրականացվել է թվով 454 համայնքային ծառայողների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 11,280.4 հազար դրամ՝ նախատեսված 20,877.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 54.0%-ով, ինչը պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 9,597.5 հազար դրամով: Այս ծախսերը ներառում են պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 1,490.40 հազար դրամ՝ նախատեսված 35,700.0 հազար դրամի դիմաց կամ 4.2%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2019 թվականի բյուջեի անկախ աուդիտ

անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունների ձեռք բերումը:

Կենցաղային և հանրային սննդի ծառայությունների գծով ծախս չի կատարվել:

Երկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 944.0 հազար դրամ՝ նախատեսված 28,300.6 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 3.3%-ով, ինչի շրջանակներում ապահովվել է դիագնոստիկ փորձագիտական այցով և Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված ժողովի նախապատրաստական նիստի մասնակցության նպատակով Երևանի Ժամանած Ֆրանսիայի Իլ դը Ֆրանսի և Լիոնի պատվիրակությունների ընդունելությունը

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանման ծախսերը՝ 36,633.8 հազար դրամ, 1,200.0 հազար դրամը՝ սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայությունները: Ծրագրի գծով փաստացի կատարողականը կազմել է 37,833.8 հազար դրամ կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 78.2%-ով, որը պակաս է 2019 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 1,450.0 հազար դրամով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 8,288.7 հազար դրամ՝ նախատեսված 20,438.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 40.6%-ով, ինչը 1,329.5 հազար դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, գազասպառման համակարգի սպասարկման, ինչպես նաև հնոցապահի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 180,930.1 հազար դրամ՝ նախատեսված 203,458.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 88.9%: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 54,676.4 հազար դրամի ծախս՝ նախատեսված 75,642.9 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 72.3%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 135,477.3 հազար դրամ՝ նախատեսված 167,288.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 81.0%, կամ 17,901.7 հազար դրամով պակաս նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը:

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 12,149.4 հազար դրամ՝ նախատեսված 23,371.6 հազար դրամի դիմաց, ինչը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել խմելու ջուր, մեկանգամյա օգտագործման բաժակներ, տնտեսական ապրանքներ:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 83,320.1 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 92,695.8 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 89.90% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման և COVID-19 համաճարակով պայմանավորված ախտահանիչ նյութերի, պաշտպանիչ արտահագուստի, դիմակների, դիսպենսերի ձեռք բերման ծախսերը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 226,294.8 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 226,294.8 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100.0%: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի

պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերի ձեռքբերումը, ընթացիկ այլ աշխատանքներ:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 46,604.5 հազար դրամ՝ նախատեսված 53,270.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» N 28-Ա որոշումով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչպես նաև մեկ անձի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվել է խեղման նպաստ:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական առևտրային կազմակերպություններին հոդվածով ծախսը կազմել է 11,763,6 հազար դրամ նախատեսված 23,527.2 հազար դրամի դիմաց՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին երկու ուղղություններով կազմակերպելու համար:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 3,381.7 հազար դրամ՝ նախատեսված 4,942.5 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական գնման և տուրքերի վճարման ծախսերը:

Այլ ծախսեր հոդվածով նախատեսված 36,126.0 հազար դրամի դիմաց կատարվել է 455.1 հազար դրամի ծախս՝ Էրեբունի վարչական շրջանի լուսավորվող ցուցանակների վերանորոգման և սպասակման նպատակով:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 87,176.5 հազար դրամ՝ նախատեսված 163,752.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 53.2%, ինչը 38,349.2 հազար դրամով ավել է 2019 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով նախատեսված 56,995.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 47,506.1 հազար դրամ, որից 44,775.0 հազար դրամ գումարն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի հիմնական և պահուստային

տվյալների մշակման կենտրոնների վերազինման համակարգի ձեռքբերմանը, ինչպես նաև աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով փաստացի ծախսը կազմել է 1,804.0 հազար դրամ՝ նախատեսված 2,100.0 հազար դրամի դիմաց՝ հակավիրուսային համակարգի ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով:

**2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 70,375.9 հազար դրամ՝ նախատեսված 145,566.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 48.3%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Աջափնյակ, Ավան, Դավթաշեն և Էրեբունի վարչական շենքերի ընթացիկ վերանորոգման և Նոր Նորք վարչական շրջանի ջեռուցման համակարգի, պատուհանների նորոգման և ապաստարանի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

**3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու** ծառայությունների դիմաց վճարման ծախսեր ծրագրով փաստացի ծախս չի կատարվել:

**4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 78,604.5 հազար դրամ՝ նախատեսված 95,245.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 82.5%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի N 206-Ն որոշմամբ սահմանված կարգով:

**5. Նախագծային աշխատանքներ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 115,710.3 հազար դրամ՝ նախատեսված 226,260.0 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2019 թվականի փաստացի ցուցանիշից 34,280.8 հազար դրամով ավելի: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

**6. Գլխավոր հատակազծի ճշգրտում և Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,000.0 հազար դրամ հաստատված 158,000.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 17.7%, որի շրջանակներում իրականացվել է Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական աշխատանքներ:

**7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 78,657.8 հազար դրամ՝ նախատեսված 113,350.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 69.4%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

**8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 25,388.1 հազար դրամ՝ նախատեսված 75,710.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 33.5%, որոնց շրջանակներում վառելիքով, տրանսպորտային միջոցներով և գրասենյակային նյութերով աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային զինկոմիսարիատներին և քաղաքացիական պաշտպանության կառույցներին: 24,552,9 հազար դրամ գումարով իրականացվել է Հրշեջ-Փրկարար ջոկատի համար ձայնային ազդանշանային էլեկտրոշակների և ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի ձեռքբերման աշխատանքներ:

**9. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 11,550.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 14,100.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 81.9%: Փաստացի կատարողականի շեղումը պայմանավորված է հաշվետու տարվա ընթացքում զորակոչի արդյունքում Երևանի ենթակայության կազմակերպություններում նոր այլընտրանքային աշխատանքային ծառայողներ ներգրավելու հանգամանքով:

**10. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 130,542.8 հազար դրամ՝ նախատեսված 274,136.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 47.6%: Ծրագրի շրջանակներում Կոմիտասի զբոսայգում, Ա.Միկոյանի և Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի շրջակա տարածքում, Մարզահամերգային համալիրի հարակից տարածքում, Իտալիայի, Բեյրութի, Վ.Սարգսյան և



Նանսենի փողոցներում ոռոգման ցանցի կառուցման, Երևանի հ. 153 դպրոցի բակի հարակից տարածքի արտաքին ոռոգման ցանցի կառուցման, ինչպես նաև Ա.Միկոյանի փողոցի և Կոմիտասի անվան զբոսայգում ու Դոմուս առևտրի կենտրոնի հարակից տարածքում խորքային հորի կառուցման աշխատանքներ:

**11. Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար դրամաշնորհային ծրագիր և Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար ծրագրի համաֆինանսավորում** ծրագրերով կատարված ծախսը կազմում է 19,571.4 հազար դրամ նախատեսված 633,876.9 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 3.1%:

**12. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող <<Երևանի էներգաարդյունավետության>> ծրագիր, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ <<Երևանի էներգաարդյունավետության>> ծրագիր համաֆինանսավորում**, ծրագրով կատարվել է 123,980.0 հազար դրամ գումարի ծախս՝ որպես <<Երևանի էներգաարդյունավետության>> դրամաշնորհային ծրագրի միջնորդավճար: Ծրագրով նախատեսվում է Երևանի թվով 28 մանկապարտեզներում իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ:

**13. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում** ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,680,013.0 հազար դրամ՝ նախատեսված 3,939,500.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 93.4%, ինչը ավել է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից 219,358.8 հազար դրամով, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայթերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 5,938.4 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի և թվով 118 դիտահորերի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև փողոցների 402.2 գծմ ճաքալցման աշխատանքներ:

**14. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 120,368.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 150,000.0 հազար դրամի դիմաց, ինչը ավելի է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից 53,428.1 հազար դրամով: Իրականացվել է 12083քմ փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

**15. Եզրաքարերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 126,930.8 հազար դրամ՝ նախատեսված 191,582.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 66.1%, որով թվով 8 վարչական շրջաններում շուրջ 12,478.2 գծմ եզրաքարերի, Դավթաշեն վարչական շրջանի Կաղնուտի այգու մայթի եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար:

**16. Հենապատերի վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 46,337.0 հազար դրամ՝ նախատեսված 129,095.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 35.9%, որը պակաս է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 29,624.7 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատեր՝ թվով 20 հասցեներում:

**17. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 12,088.5 հազար դրամ՝ նախատեսված 173,548.5 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում կատարվել են Հալաբյան-Լենինգրադյան խաչմերուկի ստորգետնյա հետիոտնային անցումի և Մարշալ Բաղրամյան մետրոյի կայարանի մոտ ստորգետնյա հետիոտնային անցումի հիմնորոգման աշխատանքներ:

**18. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 86,000.0 հազար դրամ՝ նախատեսված 180,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 41 կամուրջների, էստակադաների, հետիոտն վերգետնյա անցումների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների և ուղետարերի նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները:

**19. Հրազդանի կիրճի բարեկարգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,049.4 հազար դրամ՝ նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

**20. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 127,075.7 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 445,779.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 28.5%, որի շրջանակներում իրականացվել են Հակոբ Հակոբյան փողոցի վերանորոգման, Նորագավիթի 1-ին փողոցի

կամրջի հարևանությամբ գտնվող տարածքի բարեկարգման աշխատանքներ, Գլենդել Հիլզ թաղամասից դեպի Գրիգոր Լուսավորիչ և Արգիշտի փողոցների ճանապարհի նոր մայրերի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի փողոցների մայրերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ

**21. Փողոցների պահպանում և շահագործում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 21,720.6 հազար դրամ՝ նախատեսված 228,550.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի որոշ փողոցների մետաղական ցանկապատերի և միջնապատերի վերանորոգման և ներկման, բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքներ, ինչպես նաև Երևան քաղաքի Աթենքի փողոցի քարաթափումների կանխարգելիչ ցանցապատման աշխատանքներ:

**22. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով** փաստացի ծախսը կազմում է 409,220.6 հազար դրամ նախատեսված (ճշտված) 445,680.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 91.8 %: Ծրագրի շրջանակներում 49,220.6 հազար դրամ գումար տրամադրվել է Երևանտրանս ՓԲԸ-ին որպես սուբսիդիա՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ Փարքինգ Սիթի սերվիս ՓԲԸ-ին:

**23. Թեքահարթակների կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,716.3 հազար դրամ՝ նախատեսված 23,800.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 40.8%, որի շրջանակներում Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների մայրերի և բազմաբնակարան շենքերի մուտքերում կառուցվել են թվով 57 նոր թեքահարթակներ:

**24. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 53,666.7 հազար դրամ՝ նախատեսված 362,336.2 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 14.8%, ինչի շրջանակներում 7,105.5 հազար դրամով կատարվել են անվճար հայտարարությունների տախտակների, ձուլվածքով աղբամանների նորոգման, 9574.8 հազար դրամով նստարանների ամբողջական և մասնակի վերանորոգման աշխատանքներ, 21,497.0 հազար դրամով՝ հետիոտնային կանչի լուսացույցի համար վահանակով և ուղղագիծ սյուներով ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ:

**25. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում, Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում, Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման միջոցառումներ** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 780,238.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 1,012,511.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.1%:

**26.Տրանսպորտային համակարգի արդիականացում** ծրագրով նախատեսված (ճշտված) 1,825,000.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 474,500.0 հազար դրամ՝, որը կազմում է 26.0%: Ծրագրի շրջանակներում ձեռք բերված թվով 100 ավտոբուսներից վճարվել է 26 ավտոբուսների դիմաց, գումարի տարբերության վճարումը կկատարվի 2021թվականի Երևան համայնքի բյուջեի շրջանակներում:

**27. Կայանատեղիների կառուցում և վերակառուցում** ծրագրով ծախս չի կատարվել:

**28. Վերելակների հիմնանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,683,621.6 հազար դրամ՝ նախատեսված 5,179,200.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 51.8%, որի շրջանակներում 2,524,132.5 հազար դրամով ձեռք է բերվել 437 նոր վերելակ, որի դիմաց վճարումը պայմանագրի համաձայն կատարվել է մասնակի, իսկ 159,489.1 հազար դրամով թվով 9 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

**29.Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,799,810.7 հազար դրամ՝ նախատեսված 2,801,071.0 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

**30. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 628,315.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

**31. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ)** ծախս չի կատարվել:

**32. Զբոսաշրջության զարգացում** ծրագրով ծախս չի կատարվել՝ կապված երկրում տիրող համավարակի և ռազմական դրության հետ:

**33. Դրոշների տեղադրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 18,879.9 հազար դրամ՝ նախատեսված 45,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 42.0%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են ՀՀ դրոշների փոխման, հիմնային պատվանդանների նորոգման աշխատանքներ:

**34. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար** ծրագրով ծախս չի կատարվել:

**35. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 168,100.0 հազար դրամ՝ նախատեսված 180,100.0 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և

ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

**36. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 810,833.6 հազար դրամ՝ նախատեսված 863,204.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 93.9%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ թվով 42 կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն): Կառավարման մարմնի պահպանում ծրագրի պարզևատրման ֆոնդից վերաբաշխման արդյունքում 237,573.7 հազար դրամ գումարը նշված ծրագրի շրջանակներում ուղղվել է Երևանի պոլիկլինիկաների աշխատակիցներին պարզևատրելուն: 298,800.0 հազար դրամն ուղղվել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին՝ համավարակի և ռազմական դրության ժամանակ ուղևորափոխադրումները պատշաճ կերպով իրականացնելու համար:

**37. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր** ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 11,303,568.0 հազար դրամ նախատեսված 3,921,000.00 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 288.3%, :

**38. Տոնական ձևավորում** ծրագրով փաստացի ծախս չի կատարվել ծրագրված 127,000.0 հազար դրամ գումարի դիմաց:

**39. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ** ծրագրով կատարվել է 28,298.7 հազար դրամի ծախս նախատեսված 49,300.0 հազար դրամի դիմաց, և կատարողականը կազմում է 57.4%: Գումարը որպես սուբսիդիա տրամադրվել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին հատակագծի կազմման աշխատանքների համար:

**40. Ներդրումային ծրագրերի իրականացման** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 99,665.6 հազար դրամ՝ նախատեսված 148,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 67.3%, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

**41. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,035.7 հազար դրամ՝ նախատեսված 12,302.7 հազար դրամի դիմաց, որից 4,685.7 հազար դրամը հատկացվել է թվով 3 վարչական շրջանների համատիրություններին վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց, իսկ 4,350.0 հազար դրամը՝ աղբահանության վճարի անդորրագրերի տպագրական աշխատանքների ձեռքբերմանը:

**42. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում** ծրագրով փաստացի ծախս չի կատարվել:

**43. Տոնավաճառների կազմակերպում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 83.0 հազար դրամ ծրագրված 1,035.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում իրականացվել են գյուղատնտեսական տոնավաճառի տաղավարների արդիականացման աշխատանքներ:

**44. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացում** ծրագրով ծախսը կազմել է 364,304.3 հազար դրամ 460,709.6 հազար դրամի դիմաց որն ուղղվել է Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև 106,670.0 հազար դրամ գումարը ուղղվել է Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում Արցախից ՀՀ ժամանած քաղաքացիներին Արցախ տեղափոխելու տրանսպորտային փոխադրումներին:

**45. Երևանտրանս ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղի կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,428.6 հազար դրամ՝ նախատեսված 1,428.6 հազար դրամ՝ որպես կառուցված անգարի և վլացման կետի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության պարտքի մարում:

**46. Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,173,134.0 հազար դրամ՝ նախատեսված 1,399,595.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 83.8%, որի շրջանակներում 17,356.6 հազար դրամով ձեռք է բերվել ձեռնոց, բահ, փոցխ, 405.0 հազար դրամը COVID-19 համավարակի կանխարգելման նպատակով քլորակրի ձեռք բերելուն, 467,542.4 հազար դրամով ձեռք են բերվել էքսկոլատոր բեռնիչ մեքենաներ, անիվային մինի բեռնիչ մեքենաներ, ինքնաթափ բեռնատար մեքենաներ և ավլոդ, մաքրող փոշեկուլ կոմունալ ճանապարհային մեքենաներ,

687,184.3 հազար դրամով կենցաղային թափոնի մետաղական և պոլիէթիլենային կոնտեյնների ձեռք բերմանը և 645.6 հազար դրամ տրամադրվել է խեղման նպաստ:

**47. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 374,913.2 հազար դրամ՝ նախատեսված 375,086.5 հազ. դրամի դիմաց:

**48. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման», Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» և «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրոշմանիշային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)** ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 13,904.6 հազար դրամ՝ նախատեսված 146,505.6 հազար դրամի դիմաց:

**49. «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր** ծրագրով նախատեսված 4,611,592.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 4,426,271.2 հազար դրամ, կամ 96%, որն ուղղվել է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում սանմաքրման (այդ թվում՝ ձյան մաքրման) և աղբահանության աշխատանքներին:

**50. «Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում** ծրագրով իրականացվել է 67,674.4 հազար դրամի ծախս՝ նախատեսված 127,197.3 հազար դրամի դիմաց, որն ուղղվել է ենթավարկային պայմանագրի մասհանման գծով պարտավորությունների կատարմանը:

**51. Զրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 130,491.2 հազար դրամ՝ նախատեսված 274,246.4 հազար դրամի չափով կամ ընդհանուր կատարողականը կազմել է 47.6%, որի շրջանակներում կառուցվել և վերակառուցվել են Արաբկիր 37,35,33 փողոցների, Ավան, Թամրուշի փողոցի, Նոր Նորքի Բ. Մուրադյան փողոցի հ. 3, 5 շենքերի և Արաբկիր, Քոչարի 1-ին նրբանցքի կոյուղագծերը, Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղատարը, ինչպես նաև կատարվել են Երևանի ԶԷԿի հարևանությամբ գտնվող



թափառող կենդանիների վարակազերծման կենտրոնի ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքներ:

**52. Գետերի հունների մաքրում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 38,683.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով:

**53. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում** ծրագրով նախատեսված 4,360,049.7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3,002,031.9 հազար դրամ, որից 2,752,700.6 հազար դրամը որպես սուբսիդիա տրամադրվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին որպես սուբսիդիա, 151,620.7 հազար դրամը՝ Հաղթանակ զբոսայգու և իրեն կից տարածքի (Սարալանջ) անտառապաշտպան գոտու ստեղծման աշխատանքներին: 84,786.0 հազար դրամ գումարով ձեռք է բերվել սրսկիչ, բենզինային խոտհնձիչ, տրակտոր և մեքենայի բազայի վրա տեղեկուպիկ ավտովերելակ: Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերի համար <<Նոր Բարեկարգում>> ՓԲԸ-ին հատկացվել է 12,924.0 հազար դրամ:

**54. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 17,379.0 հազար դրամ՝ նախատեսված 24,141.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 72.0%, որի շրջանակներում թվով 7 վարչական շրջանների տարբեր հատվածներում (աղբի կոնտեյներների հարակից տարածքներ, մանկապարտեզներ, առանձնակի դեպքերում՝ բազմաբնակրան շենքեր) իրականացվել են դեռատիզացիոն աշխատանքներ:

**55. Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 3,658.7 հազար դրամ՝ նախատեսված 14,120.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 25.9%, որի շրջանակներում Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում իրականացվել են հասարակական զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքներ:

**56. Թափառող կենդանիների վնասազերծում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 183,693.2 հազար դրամ՝ նախատեսված 234,500.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.3%, որի շրջանակներում վնասազերծվել է շուրջ 3,700 կենդանի, որից ստերջացվել է մոտ 3100, քնեցվել շուրջ 345 և որդեգրվել 85 կենդանի:

**57. Երեւան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ՝ աշխատանքների իրականացում** ծրագրով ծախսը կազմում է 210,722.7 հազար դրամ՝ նախատեսված 406,928.6 հազար դրամի դիմաց:

**58. Ինքնակամ կառույցների քանդում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,990.0 հազար դրամ՝ նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 59.8%, որի շրջանակներում 12 վարչական շրջաններում քանդվել են այն ինքնակամ կառույցները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել կառուցապատողների հաշվին:

**59. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում** ծրագրով փաստացի ծախսը կազմել է 27,084.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 27,662.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 97.9%, որն ուղղվել է վերաբնակեցված բնակիչների համար բնակարանների վարձակալության համար:

**60. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդում** ծրագրով նախատեսված 90,000.00 հազար դրամ գումարի դիմաց ծախս չի կատարվել:

